




ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
Ե. ՓՈՐՈՍՅԱՆ
ՆԱԽԱԿ ԿԱՐ ՈՐ ԵՒ Է ԳՐՈՒԹԻՒՆ
ԳԵՏԲ Է ՈՒՂՂԵԼ ԱՍ
ՏԵՐԻՆ. ԱՐՇԱՒԱՅՈՒ ԼՐԱԳՐԻ
ԳԱՀԻՐԷ (ՓՈՒՐ ԱԼԵՔԱՆԴՐ)



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԵԳԻՊՏՈՒ ՉԱՄԱՐ
Տարեկան, ողջ դանկն. 60
Վեցամսեայ » 35
ՕՏԱՐ ԵՐԿՐՆԵՐ
Տարեկան Ֆրանկ 20
Վեցամսեայ » 12

E. TOROSSIAN
Direct.-propr. du journal arménien
ARCHALOVICÉ
LE CAIRE (ÉGYPTÉ)
Poste-restante

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԵՒ ԲՂԹԱՏԱՐԻ ԾԱԽՔԸ
Խմբագրութեան վրայ:
Խմբագրութեան ուղղուած
գրութիւնք եւ չ'են օրուի:
ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ
Կանխիկ վճարելի են

ԻՄ ԿԱՐԾԻՔՍ

Մարդ ենթակայ է միշտ իրմէ զօրաւոր
այնքան անմեկնելի հակումներու, որոց բունն
հոսանքներովը յաճախ մէկը կը լինի բարի
ու մարդասէր, մին ապերախտ ու անառակ
և միւսը կամ չարագործ և կամ գուցէ
վայրագ մարդասպան:

Այդ հակումներու կամ լաւ ևս է ըսել
գերիվեր ճնշումին յատկանիշերը ըստ ինքն
քեան ոչ այնքան ծանօթ պիտի լինէին մեզ՝
առանց մարդուն կամ ընկերականութեան
իրարու հետ ունեցած չփոփոխ, նման այն
աղբերակին գոյութեանը՝ որու անուշն ու
լեզին, յստակն ու պղտորը չ'պիտի գիտնար
յոգնած ու պապակած անցորդը, առանց
լեռնի խորիտ ու անվախ գեղջկուհոյն:

Ու երբ մարդիկ իրենց բնութեանը մէջ
սեղմած այդ ազգու ոյժերը իրար բերելով,
իրար բաղխելով, կեանքին ձև մը կուտան
ու ճանապարհ մը կը բանան, ակնորև է թէ՛
յառաջ եկած իրարանցումին մէջ նպատակ
մը կը ծնի. նպատակ մը՝ յորմէ մարդիկ
իրենց սպասած արդիւնքը քաղելու համար
մին կ'ստեղծէ, կը մեկնէ, միւսը կը փաստաբանէ
և աւելի միւսը մինչև իսկ կը յերիւրէ
ու կը խեղաթիւրէ և եթէ այն պահուն
արթուն միտքը ուղղութեան և ողջմտութեան
ճրագովը մտնեայ և պահ մը կեղծողին,
ստողին աչքերը խողտին, ալ անկէ յետոյ
սկսուած է «Այո» ու «Ո՛չ» ու «Ե՛ս» ըն ու «Ի՛նչ»:

Պայքարը փրթած է, որու զօրեղ ու
հուժկու պուշտուքներէն ալ՝ ամեն կողմ
հետաքրքրուած:

Եւ ժողովուրդը անմեղ ու միամիտ. իր
ձայնածուններու ոլորապտոյտ սողոսկումներուն
և մինչև իսկ կեղծիքի անմեկնելի
բնականութեանը անգիտակ պարզ դիտողէ
մը աւելի ինքը կը վարէ կռիւր, պայքարը՝
որ մինչև այն ատեն վերածուած է արգէն
մոլեռանդ կուսակցութեան:

Եւ նոյն այդ կուսակցութիւնը որ ի
սկզբան միջտի մը չափ փոքր կ'երևի,
սակայն ի վերջոյ այնքան կը մեծնայ որ
մարդկային միտքը այլ ևս հազու կրնայ
երևակայել վախճանը, մինչև իսկ ազգի մը
կամ ժողովրդի մը վիճակին առջև:

Իայց սա ճշմարիտ է թէ շատ քիչեր
կը հաւատան կուսակցութեան՝ դէպ ի մի

ժողովուրդ յառաջ բերած գովելի ու օգտակար
կարեւորութեանը, և երբ մեր մէջ
գաղափարային այդ լուսաւոր ճառագայթը
ստեպ կը գործածուի դէպ ի չարն ու դէպ
ի վնասաբերը, դիւրին է մեզ հետեցնել
այն յուսախաբութիւնը՝ զոր մենք կուսնենանք
միշտ, մեր ամեն գեղեցիկ ու գովելի ճրագ-
տուածներուն մէջ:

Մենք հայերս՝ ժողովուրդներու կարգին
մէջ թերևս ամենէն կոյրը համարուինք
և գուցէ ճշմարտութենէ շատ հեռի եղած
չ'լինի:

Մեք՝ մեր ամենէն կարեւորագոյն գործոց
համար կուրօրէն կը հաւատանք կարգ
մը անձանց ըստ հաճոյս մեկնումին և փաստաբանութեանը՝
որք իրենց գաղտնի ու թաքուն միտումներովը
շատ անգամ կը ընդգրկեն լոկ իրենց սին փառասիրութիւնը
ու ամենաստոր կրքերը և կամ իրենց այլ
ընդ այլը ԵՆՔՐԻՖԵՆԵՐԸ. և մե՛նք ո՛չ մի մտածումով
և ոչ մի գովելի նախատեսութեամբ կարող
չենք լինիլ մինչև իսկ դէժ լուրջ գաղտնութեամբ
մը գործին կամ խնդրոյն ամեն մէկ կողմերը
քննել ու հասկնալ:

Եւ ահա այս փնասաբեր հետեանք մեք
ուսեցած ենք մեր ընկերութեանց ծանօթ ու
յայտնի մեծութեանը մէջ այնքան սողոսկողներ,
որք մեր ազգին բարօրութիւնն ու իղձերը
չեն խնայած ու դէժ օր մը իրենց խղճին
ու սրտին առջև պատասխանատու ըլլալու
երկիւղէն իսկ չեն ահաբեկած: Կրնայի՞նք
չ'հաւատալ թէ այդպիսիք մեր ժողովրդեան
ճակատագրին վրայ նշանակեց մը անգամ
չ'պիտի լինէին եթէ նոյն իսկ մեք՝ ժողովուրդքս,
այդպէս ներք չ'քաջալերէինք: Ընտանեկան
յարկին մատղաշ գառնուկը իր մօրը կաթին
համար այլ ևս չ'լար, եթէ անգամ մը երկուք
իր լացը գոհացում գտած չ'ըլլայ:

Այսպէս է ճիշդ ժողովրդեան հոսանքին
մէջ. մեր ունեցած դատապարտելի արարքները
դիտողի մը աչքէն չ'վրիպելով հրապարակուելէ
յետոյ, ո՛չ մի դատաստանի, ո՛չ մի քննութեան
չարգարացումը քաջալեր մ'է «Այո» կամ «Ո՛չ»
ի կողմերուն գործածներուն շարունակութեանը.
որով ի հարկէ կրքերը կը մեծանան և աւելի
ծաւալ գտած՝ կ'աւրեն կ'ապականեն ժողովրդային
բարոյականի վերին արժանապատուութիւնը:

Եւ ո՞վ է վառնգեալը. եթէ ոչ ժողովուրդք.
այսօր ալ վազն ալ ժողովուրդք:

Իայց թէ դարման. Գարման չունինք:
Գանի որ վատոյժ ենք ճշմարտութիւնը
խոստովանելու, տկար ենք ուղղութիւնը
պաշտպանելու և մինչև իսկ համը՝ բան մը
կարենալ ըսելու դէպի բունաչարողը, մեք
իրբ ժողովուրդ, ապագայ չունիմք և չ'պիտի
կրնանք ունենալ այն յաղղութիւնները, որոց
հասնելու համար կը հիմնենք, կ'ստեղծենք
կուսակցութիւններ. փոքր ու մեծ ընկերութիւններ,
խումբեր, ամեն ալ իրենց փայլուն ու ճոխ
կանոնագրքերով:

Սակայն թէ ի՞նչ եղած է մեր այսքան
ընկերութեանց արդիւնքը . . . :

Մինչև հոս չենք կրցած ըմբռնել թէ
կուսակցութիւն կիրք չ'նշանակեր. չենք
կրցած հաւատալ թէ ո և է գաղափարային
տարբեր մտածում չ'փնասեր մեր առօրեայ
եղբայրական տեսակցութեանց. հետեաբար
կ'անգիտանանք մեծ ըլլալու բուն նշանակութիւնը
ու կը հետեւինք փոքրէ մը աւելի փոքր
լինելու հետեղութեանց փարեղով ու յարեղով.
ձեռնամուխ կը լինինք յաճախ ժողովրդի
մը հոգեկան սրբութիւնը արատաւորող
տարբեր ուղղութեանց և եթէ մագի չափ
մերձեցում մը ուղղակի մեր փառքին
մեր հպարտութեանը հասնի, մենք անհիղճ
կը գտնուինք ձեռքերնէս ձգել փշրել
ամբողջը, ինչ որ կրնէ անմտօրէն խոհանոցի
խստասիրտ ծառան: Ոչ ոք կրնայ ուրանալ
թէ ամեն ոք պարտք մը ունի, դէպի իր
հայրենիքը և դէպի ընկերականութիւնը.
և այնպիսիք որք իրենց պարտականութիւնը
կատարելու համար այնքան սրբութեամբ
և պատրաստականութեամբ չեն կրնար
ներկայանար, դարձեալ իրենց պարտականութենէն
աւելին և աւելի աւելին կատարած կը
լինին, եթէ գէժ խղճացող մը ըլլան
ազգի մը վիճակին, պատուոյն և բարոյական
բարձրութեանը դէմ:

ՄԻՅԱՍՈՒ

ՆԱՄԱԿ ԱՂԵՔԱՆՈՐԻԱՅԵՆ

Ազն. Տիար Յ. Յ. Շնորհքեան, որ Աղբաթախնամի
Տնօրէն ժողովոյն Ատենապետութիւնը կը
վարէ մինչև ցայ վայր, հետեալ նամակը
ուղղելով մեզ, ինչ ինչ լուսաբանութիւններ
կուտայ Աղբաթախնամի գործոց մասին:
Վերջերս այդ հաստատութեան շտաբ

չատ մը խնդիրներ դարձած են, և առ այդ քանի մը թղթակցութիւններ մեզ հասած. սակայն Տիար Շնորհքեանի գրածներն ամեն տարակոյտ վեր նկատելով կը հրատարակենք զայն իբր ամենահարազատ ճշմարտութիւններ:

Աղէքսանդրիա, 23)5 Ապրիլ 1900

Առ Պատ՝ Տնօրինութիւն «Արշալոյս» ազգագուտ լրագրի Ի Գահիրէ .
Մեծապատիւ Տէ՛ր,

Ձեր ազգագուտ թերթը առաջինն եղաւ Հայ հասարակութեան ուշադրութեանը ներկայացուցելու քաղաքիս Աղքատասիրաց բարեգործական ընկերութեան շուրջը դարձող զարմանալի դէպքերը, Ձեր յարգոյ թղթակցից «Արշա»ի մի նամակին հրատարակութեամբ, որով այս վերջինս կը պատմէ վերջին 12/25 Մարտի կիրակի օրուան Ընդհանուր ժողովոյն իւր վրայ թողած տեսերու պատկերները:

Յարգոյ թղթակցին իւր արագ տեսութեանը մէջ շատ մը ցաւալի, բայց զգազգաբար ստոյգ, իրողութիւններ կը յիշատակէ, որոց վրայ ծանրանալ աւելորդ կը նկատեմ:

Բայց, կը յուսամ թէ Պատ. ընթերցողները պիտի ներեն ինձ յիշեալ խիստ տիրեցողիչ անագին գործերն անգամ մ'եւս իրենց աչքին առջեւ բերել խորին շնորհակալութեամբ գովելու համար հրատարակաւ, այն անկախ եւ արի շարժումն որով թէ՛ Պատ. Տնօրինութիւնը եւ թէ՛ յիշեալ յարգոյ թղթակցի հանրութեան դատաստանին կ'ենթարկէ ինչպիսի մը որ իւր գոյութիւնը մի միայն կը պարտի անսովոր եւ անարդարանալի եղանակներով 'ի հանդէս բերուած ապօրինի դրոժողութիւններու, որոց շարժառիթն եղած են անձնական չափազանցեալ կիրքեր, եւ նեցուկը՝ բիրտ ոյժի արատաւ կարգի սպառում մը եւ անխոստովանելի գրգռներով եւ մասնաւոր կանխամտածութիւններով հրաւիրուած բարձր ազգեցութիւններ:

Այս հանրային խնդրոյն մօտէն տեղեկ եղողները լաւ գիտեն վերջին տողերուս մէջ խօսացած իմաստն որուն մանրամասն նկարագրութիւնն եւ յարակից փաստերուն թուումը շատ ընդարձակ պիտի գար ներկայ գրութեանս ներքին սահմաններուն համար:

Այն բարձր յարգանքը զոր կը պարտիմ ճշմարտութեան եւ քաղաքիս ընդհանուր Հայ հասարակութեան պատուոյն, կը պահանջէ որ եթէ հարկը մնայ, ուրիշ անգամ բաւական կերպով բացատրեմ ինչ որ այս անգամ պարզ յիշատակութեամբ մը միայն կ'ակնարկեմ:

Ներկայ առիթէն օգուտ քաղելով թոյլտուութիւն կը խնդրեմ Պատ. Տնօրինութեանէջ վայրկեան մը կանգ առնել Ձեր Յարգոյ թղթակցին գործածած բացատրութեանց համաօտութեանը պատճառաւ անորոշ մնացած եւ հետեւապէս Պատ. ընթերցողաց կողմէ սխալ ըմբռնման ենթակայ մի քանի կէտերու վրայ, ինչ որ ապահով եմ թէ չգիտի խախտէ այն արգար եւ անկողմնակալ գնահանատութիւններն որոց միշտ արժանի մնալ կը փափաքեմ թէ՛ գործովս եւ թէ՛ խօսքովս:

Ձեր Յարգոյ թղթակցին անաչառութենէն կը սպասեմ հաստատումը յետագայ լուսաբանութեանց, կամ անոնց քննադատութիւնն՝ եթէ ըստ իւր համոզման ճիշդ չեն անոնք:

Խնդրոյ նիւթ եղած նամակին մէջ կը կարգում հետեւեալը.

«Վերջապէս ոչինչ եղրակացութեան յանգեալով հրատարած Աղք. ընկերութեան տնդամները՝ ստորագրելու համարելով մեկնեցան, միանգամայն նոր անդամներուն ընտրութեանց իրաւունքն չմասնակցելը առարկելով:»

Այս պարբերութիւնը ճշգրտու կերպով չի ներկայացուցեր իրողութիւնը:

Ընդհանուր ժողովոյ Դիւանն 'ի զուր սպանելէ յետոյ այն ամեն կարգապահական բարոյական միջոցները զորս կը գործածեն ժողովները կառավարող պաշտօնական մարմիններ, ամեն երկրի մէջ եւ ամեն օրինաց տակ (այսինքն յորդոր, ազգաբարբութիւն, 'ի կարգ հրաւիրում, եւ այլն)

սպաննացաւ ատենը փակել եթէ անկարգութիւններ չ'դադրէին եւ հանդարտութիւնը չ'վերահաստատուէր, որպէսզի ժողովոյն օրակարգի խնդիրները ձեռք առնուէին, ասոնց լուծումէն յետոյ միայն կարելի ըլլալով խնդրոյ նիւթ ընել օրակարգէն դուրս՝ անդամի մը կողմէ տեղի ունեցած ունիցէ առաջարկութիւն:

Աւելորդ է ըսել թէ յիշեալ յորդորներն, ազգաբարբութիւններն եւ վերջապէս՝ սպանալիքներն ունիցէ արդիւնք մը չունեցան զգազգաբար, այլ, ընդհակառակը, թո՛ւ ու բո՛հն անկարագրելի համեմատութեանց հաննելով, ժողովոյն Պատ. Ատենապետն ոտք ելնելով, հանդիսաւորապէս, փակուած հոշակեց ատենը: Եւ, այնուհետեւ միայն, իբր բնական հետեւութիւն այս իրողութեան, ընկերութեան անդամոց միժ մասն, ընդ որս եւ Տնօրէն ժողովոյ անգամ, Դիւանի անդամներէն առաջնորդուած, մեկնեցան ժողովարարէն:

Ձեր Յարգոյ թղթակցին իւր նամակին մէջ երեք տարբեր տեղեր «հրատարած (կամ հրատարակ) Աղք. ընկերութիւն» բացատրութիւնը կը գործածէ, որ կը հաւատամ թէ իւր միտքը ճիշդ կերպով չի ներկայացուցեր, եւ հետեւապէս անոր բառակախ իմաստին յառաջ բերած ըմբռնումը չի համապատասխանէր իւր իսկ համոզման:

Աղքատասիրաց բարեգործական ընկերութիւնը հրատարած չէ երբէք, նոյն ինքն Աղք. բար. ընկերութեան օրինաւոր Տնօրէն ժողովը հրատարած մարմին մը չէ բնաւ, այսինքն ընկերութեան գործերը վարելու պաշտօնն ունեցող ժողովը դեռ մինչեւ այսօր վայրկեան մ'իսկ դադրած չէ իւր օրինական գոյութիւնը պահելէ, ճի՛շդ ինչպէս իւր պաշտօնի կանոնական լրումէն (31 Դեկտ. 1899) յետոյ մինչեւ վերջին Ընդհանուր ժողովոյ գումարման օրը (12/25 Մարտ 1900), նոյնպէս եւ այս թուականէն մինչեւ այն օրը յորում իւր օրինաւոր յաջորդը պիտի ունենայ:

«Տնօրէն ժողովոյ հրատարակում» խօսքը ներկայ պարագային մէջ, ուրիշ բան չի նշանակեր, զի ուրիշ բան չէ, բայց եթէ անոր պաշտօնին օրինական, կանոնական լրումը:

Յիշեալ Ընդհանուր ժողովը կանոնադրին պահանջած տարեկան ժողովն էր որ Տնօրէն ժողովոյ տարեկան համարատուութիւնը պիտի լսէր եւ պիտի վաւերացունէր զայն Գրինիչ յանձնաժողովոյ կողմէ կատարուած քննութեանց արդիւնքին հիման վրայ, պիտի ընդունէր յառաջիկայ տարուան համար նախատեսեալ հասութից եւ ծախուց ծրագիրը, եւ պիտի ընտրէր տարեգլխէն ի վեր պաշտօնը կանոնապէս լրացեալ Տնօրէն ժողովոյն յաջորդելիք նոր Տնօրէն ժողով մը եւ իւր (Ընդհանուր ժողովոյ) Դիւանին հրատարակ երկու անդամոց տեղ Ա. Ատենապետ մը եւ Բ. Ատենապետ մը:

Ինքնայայտ է թէ Տնօրէն ժողովն իրաւունք իսկ չունէր եւ չունի (հակառակ անոր անդամոց ամենաջերմ փափաքին) թօթափել իւր պարտականութիւններն այն վայրկեանէն առաջ, յորում իւր յաջորդն օրինաւորապէս ընտրուած չ'ըլլար, եւ հետեւապէս, քանի որ մինչեւ այսօր իսկ այդ օրինաւոր ընտրութիւնը տակաւին տեղի ունեցած չէ, ըստ ամենայն օրինաց նա է եւ կը մնայ ընկերութեան գործերը վարելու պաշտօնին իրաւանցն եւ պարտականութեանցը բացարձակ տէր:

Չ'կարծուի ուրեմն որ Ձեր թղթակցին հետեւեալ խօսքը թէ՛

«Հրատարակ Աղք. ընկերութիւնը որոշած «է իր պաշտօնը շարունակել եւ ոչ ոքի հայել «չ'յանձնել» մինչեւ այն ատեն երբ օրինական «ընտրութիւն մը կատարուի»: Ուրիշ բան կրնայ նշանակել բայց եթէ այն բնական եւ օրինաւոր կացութիւնն որ ինչպէս 12/25 Մարտէն առաջ անվիճելի իրողութիւն մ'էր, նոյնն է նաեւ հիմայ յիշեալ թուականէն ետքն ալ:

Տնօրէն ժողովն — ու ելցէ Տնօրէն ժողով մը — ընկալեալ տեղեկարարական կարգ ու կանոնի այս անքննադատելի պահանջքին դէմ կարող չէ, ու ելցէ իրաւունք չ'ունի, դիմագրաւելու. եւ եթէ, ներկայ պարագային մէջ, Տնօրէն ժողովն այդպիսի խորհուրդ մը ունեցած չէ կրէք, զայս իրեն իբր յանցանք վերագրել կամ իւր մէկ յատուկ կամայական որոշմանն արդիւնքը համարել կ'ենթադրէ արամադրութիւն մը ընկերութեանց ապա-

հովութեան եւ տեւականութեան երաշխաւորել զլրաւոր հիմնական մի անվիճելի բնական օրէնքն ուրանալու:

Ապահով եմ թէ Ձեր Յարգոյ թղթակցին միտքն այս չէ, բայց իւր գրութեան վերջի մասն անպատկերապէս մեկնելու ամենաթեթեւ հակամիտութիւն մը կրնայ առաջնորդել վերոյիշեալ եզրակացութեան որուն անձեղութիւնն ինքնայայտ կերպով կ'ապացուցանէ արդէն նոյն ինքն Պ. թղթակցին գրութեանը մէջ բացարձակապէս տիրող ոգին որ իւր ազնիւ զգացմանց եւ ուղիղ ու խոհական դատողութեան նշանն է:

Իրագրել անձինք քաջ գիտեն թէ որչափ դառն վիշտ զգացած է Ն. Վ. Պողոս փաշա Նուպար, պատուակալ նախագահն եւ պաշտպանն Աղք. բարեգործական ընկերութեան, հետեւանց իմանալով այն յոյժ ցաւալի իրաց վիճակն որ կը տիրէ ընկերութեան նկատմամբ, մօտ ժամանակէ մ'ի վեր: Նորին Վսեմութիւնն, որուն բարեւէր եւ քաջալերիչ ազդեցութիւնը, նոյն իսկ շատ մօտ ատեններս, դարձեալ վստիւած են ընկերութիւնս ինչպէս նաեւ անոր օգտին աշխատողները՝ յոյժ պատուաբեր եղանակաւ մը, եթէ առիթ ունենայ մօտէն տեղեկանալու յիշեալ տխուր իրաց պարագաներուն եւ բարեհաճի իւր ազգու ձայնը լսելի ընել, ապահով եմ թէ ինչ որ ընկերութեան յատուկ կանոնադրին եւ առնասարակ ամեն օրէնք կը տրամադրեն չպիտի շարունակէ մնալ առարկայ անհարկի, անիրաւ եւ խիստ վնասակար կիրքերու. եւ զայս, կը համարձակիմ յայտարարել, ոչ ոք կարող է տարակուսի ենթարկել:

Հաճեցէք ընդունել, Մեծապատիւ Տէր, եւ ինչ Թ. Յ. Շնորհապետ

Թ. Գ. — Հարկ կը համարիմ առ այժմ լուծութիւն պահել 12/25 Մարտէն յետոյ տեղի ունեցած շատ ցաւալի նոր դէպքերու վրայ, որք շարունակութիւնն են նախորդներուն:

ՆՈՅՆ

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ


Աղէքսանդրիա. — «Արշա» Այսօր անպատճառ փոսթը նամակ հարցոց է՛ք: Հասցէն՝ Ձեր նախորդ գրութեան մէջ գտնուած սկզբնատառերն են:

ՈՐՐԱՍԻՐԱՑԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Հսկառակ Պէնյեան - Փաստելեան խումբերուն մէջ տիրող պզտիկ ու մեծ անհամաձայնութեանց և վէճերուն. հակառակ ուրիշ Որբասիրամի մը՝ թատերական տոմսերուն հրապարակ ելած օրն իսկ, չեմ գիտեր քանի հազար թուով վիճակահանութեան տոմսեր հրապարակ հանելուն, — անշուշտ Որբասիրացի ձեռնարկին քիչ շատ փաստելու դիտմամբ. — Որբասիրաց ընկերութեան Պատ. Դիւանին և ժրաջան Գործադիր ժողովոյն առ աչնիւ հասարակութիւնն ուղղած հրաւերն, կարելի է ըսել, խիստ լաւ ընդունելութիւն գտու և ընտրեալ բաղմութիւն մը հաւաքեց Օբէրա Խորվեալի մէջ, Շաբաթ երեկոյ 7 Ապրիլ:

Ներկայացումը, ինչպէս ծանուցուած էր, Օբէրոն էր:

Փաստելեան խումբը՝ եթէ շատ դժուարահաճները չ'գոհացուց, սակայն և այնպէս կրցաւ ինքզինքը լսելի ընել տալ, նոյն իսկ բարձր գասու պատկանող անգլիացի ընտանիքներու, որոնք պեւոտառներէն մէկ քանին դրաւած էին և մինչև վերջին արարուածն ուշի ուշով հետեւեցան ներկայացման:



Հասոյթի մասին, եթէ լրացնեն ստոյգ են, 40—50 ոսկւոյ ծախս մը զեղիւնք վերջ, իբր զուտ հասոյթ, Որբասիրաց ընկերութեան սնտուկին կը մնայ 60 և 70 ոսկւոյ չափ գումար մը:

Յաջողութիւն կը մտադրենք այժմէն, Որբասիրաց Ընկերութեան Պատ. Վարչութեան մտադրած ուրիշ նորանոր ձեռնարկներուն:

Պատ. Տնօրինութիւն «Արշալոյս»

Գործադիր ժողովս կը խնդրէ հրատարակել պատ. թերթի մէջ, « Որբասիրաց ընկերութեան» նուիրատուաց անդրանիկ ցանկի գումարին վրայ աւելցնելով նաև հետևեալ նուիրատուութիւնք, զորս ամենայն շնորհակալութեամբ ստացած ենք:

Ա. ցուցակին գումարն	676,25
Մեծ. Տիար Մ. Գէորգ Եկաւեանէ	40 —
" " Իսիկէնեանէ	20 —
" " Յարութիւն Սըմըտեանէ	15 —
Ազնուափայլ Իշխանուհի ոմն	97,50
" " " " " " " " "	97,50
Մեծ. Տիար Նեստոր Զանաքլիսէ	100 —
" " Օհան Թովմայեանէ	97,50

Գումարն է զըշ. ողջ 1143,75

Ի դիմաց Գործ. Ժողովոյ Որբասիրաց Ընկերութեան

Ատենադպիր Ատենապետ
Ա. ՊԱՀ Ա. Մ. ՊԵՐՊԵՐՅԱՆ

ԾԱՆՕԹ. — Կիպրոսի Կրթարան. Որբանոցին անուան գանձումներ եղած են, որոնք յաջորդ թուով պիտի հրատարակուին:

Հ Ե Ռ Ա Ք Ի Ր

ԼՈՆՏՐԱ 1 Ապրիլ. — Լորտ Ռօպըրթս կը հեռագրէ թէ՛ Պօէրները Պրանտֆորտը ձգած են և կը քաշուին դէպ ի հիւսիս:

Երէկուան բաղնուսին մէջ Անգղիացիներուն կորուստը եղած է երկու սպայ մեռեալ և 10 վիրաւորեալ, 19 զինուոր սպաննուած և 59 վիրաւորուած:

ԲԻԹՐՈՒՄ 1 Ապրիլ. — Գրիւկէր նախագահը սպարապետ ժուպէրի յուզարկաւորութեան հանգիսի պահուն, կրկնած է Պօէրներուն բացարձակ որիշումը կռիւր շարունակելու համար:

Նախագահը յայտարարած է նաև թէ՛ Զօրավար Պօթա յաջորդած է ժուպէրի:

ՓՈՒՐԻՉ 1 Ապրիլ. — Լոնտոնէն կը գրեն թէ՛ զինուորական ակումբներու մէջ եղած կարծիքը սա է թէ՛ եթէ Լորտ Ռօպըրթս արագ և վճռական հարուած մը չ'տայ, Անգղիացեաց կայութիւնը Հարաւային Ափրիկէի մէջ շատ պիտի դժուարանայ:

ՀՕՆԿ-ՔՕՆԿ 3 Ապրիլ. — Ծովահէնները Շէ-Քիւնկ-Շանի մօտ Անգղիական շոգենաւ մը բռնած և կողոպտած են. նաուդիղը ըսպաննուած և բեռնատեսուչը գերի է: Սէնտբայըրը թնդանօթակիրը ազատած է խըրուած տեղէն և Հօնկ-Քօնկ հասած է:

ԲԱՐԻՉ 2 Ապրիլ. — Նախագահ Լուպէ Անգղիական «Խաղաղութեան ընկերութեան» պատգամաւորը ընդունած է: Իր պատասխանին մէջ երկարօրէն խօսած է ծրանայի և Անգղիոյ բազմաթիւ հասարակական շահերուն վրայ և աւելցուցած է թէ՛ պատերազմը անկարելի կը նկատէ երկու երկրաց մէջ:

ԼՈՆՏՐԱ 3 Ապրիլ. — Անգղիացիները կ'ամրանան Պէօմֆօնթայի մէջ: Պօէրները կը խմբուին քաղաքին շուրջը և ամեն կողմէ կ'սպաննան Լորտ Ռօպըրթսի հաղորդակցութեանց դժերուն:

ԲԵՅՐՔՍՈՒՆ 3 Ապրիլ. — Մինչև հիմա 4 փոխադրանաւեր «Պիւշմանս քօրբսի» դասակներուն մեծագոյն մասովը Պէյրա գացած են:

Մարթըր հարիւրապետը իր առած վէրքերուն հետևանքով մեռաւ:

ՊԼԵՄՓՅՈՒՄ 7 Ապրիլ. — Ամեն օր նոր զօրախումբեր և ձիեր կը հասնին մեծ բազմութեամբ:

Կը կարծուի թէ Պօէրներուն Պէօմֆօնթայի շուրջը և հարաւակողմը ցուցուցած գործունէութիւնը, աւելի քան մըն է հնազանդութիւն յայտնած Օրանթեան Պուրկըրները ահաբեկելու համար:

Անգղիական զօրախումբերը Ռուքսօլիէն Պիսթէքըալ նահանջած են:

Ռուքսօլիի շրջակայքը Պօէրները խիստ բազմաթիւ են:

ՊԼԵՄՓՅՈՒՄ 8 Ապրիլ Պօէր զօրախումբեր երկրին ամեն կողմը կը շրջագային: Ռէտտըսպուրի կռիւր 10 մեռեալ, 35 վիրաւորեալ և 340 գերի արժած է Անգղիացիներուն:

ՄԻՄԸՍԹՕՎՆ 7 Ապրիլ. — Բանի մը Պօէր գերիներ զօրեղ փորձ մը ըրած են փախչելու համար և 14 հոգի յաջողած են:

ԼԵՅՏԻՄԻԹ 8 Ապրիլ. — Պօէրները իրենց գործունէութիւնը կը կրկնապատկեն: Կը կարծուի թէ դիտաւորութիւն ունին դէպ ի Հէյրմաքար յառաջ խաղալու, Զօրավար Պուրբի աջ կողին սպաննալով:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱԻՍՏՐԻԱ. — Վերջերս Վիէնայի մէջ զրոյց կը շրջէր թէ՛ 43 թնդանօթներ բեռնուած կառախումբ մը Կրայի կայարանէն անցած է, Բրակէն թրիէսթէ երթալով և թէ՛ այս թնդանօթները Անգղիական բանակին համար էին: Երկու Գերման արմատական երեսփոխաններ բողոքարկութիւն խնդրած են ժողովոյն նախագահ Պ. Քէօրպէրէն, որն որ իրենց պատասխանած է թէ՛ այս թնդանօթները Շանկայ, Չինաստան զրկուած են:

ՆԱԹԱԼ. — Լրագիրները Լէյտօմիթհէն քաշուած հեռագիր մը կը հրատարակեն, որ կ'ըսէ թէ՛ Պօէրները Պիկիարսպէրի և Տրաքէնսպէրի մէջ մեծ գործունէութիւն ցոյց կուտան, ուր իրենց դիրքերը արդէն չափազանց ամրացած են: Գլխաւորաբար Վան-Ռիւնէնի կիրճերը խոշոր թնդանօթներով ամրացած են:

ՄԷՃՔԻՆԿ. — Անգղիացիները կը թոյլատրեն ընկիւններուն, Պօէրներուն վրայ յարձակելու: Անգղիական հեռագիրը կ'ըսէ թէ՛ գնդապետ Պէյտըն-Ռօուիլ չկրնար զիրենք արգիլել: Ասկէջ զատ, գիտենք թէ Օրանթի հարաւակողմը այն սեւերը որք հետևած են Անգղիական բանակին, ամեն կողմ գողցած ու կողոպտած են: Եթէ ընկիւնը կ'սկսին պատերազմին մասնակցիլ, կուտայ երկրորդ մասը ահաբեկ պիտի ըլլայ:

ԳՈՐԾ ՓՆՏՈՂՆԵՐՈՒՆ

Պարապ մի՛ պտըտիք. եթէ պղտիկ գրամագլուխ մը ունիք, ամսական առ նըւազն տասը ոսկի շահ կայ, բաւական է որ գործերնիդ լաւ վարել գիտնաք:

Քաղաքիս մէջ ամենէն շատ բանուկ գործն է, որ կ'առաջարկուի ձեզ:

Ծախու սրճարան մը կայ, յարմարաւոր տեղ մը:

Ստակ վաստկիլ չէ՞ք ուզեր պատուաւոր միջոցներով. շաղակրատներուն սուրճ մը հրամցնելու ազնուութիւնն ունեցէ՞ք, որ միւշոյն ժամանակ խոնարհութիւն ալ է:

Այս սրճարանն գնելու համար պէտք է դիմել նախ «Արշալոյս» տնօրինութեան:

ԼԱ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՅ

ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԱՅԽԱՐՅԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ
ԵՐԱՇԽԱԻՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ | ՄԻԼԻԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները:
Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ինսպատ իրենց գումարած է 3 ՄԻԼԻԱՐ 480 ՄԻԼԻՅՆ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութեան մէկ միլիար աւելի է:
Ս. ԼԵՌՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ:

Աշխարհի մէջ գանուող ուրիշ որ և է ընկերութեան աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գանձէ:
ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՕՆ գլխաւոր գործ. յԱղէքսանգրիա:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՂԹԱՐԵՐ

Փարիզ 28 Մարտ

ՑՈՒՑԱՆԻՍԻ ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆԸ. — 1900ի ցուցահանդէսը 1,080,000 քառակուսի մեզր տարածութիւն մը պիտի ծածկէ, որուն 460,000 քառակուսի մեզրը շինութիւններէ ծածկուած պիտի լինին: Նախորդ ցուցահանդէսներու տարածութիւններն էին. 1855ին 168,000 քառ. մեզր, որուն 120,000 քառ. մեզրը շինութիւններ. 1867ին 687,000 քառ. մեզր, որուն 166,000 քառ. մեզրը շինութիւններ. 1878ին 730,000 քառ. մեզր, որուն 280,000ը շինութիւններ. 1889ին 960,000 քառ. մեզր, որուն 290,000ը շինութիւններէ բաժնուած էին:

ՆՈՐ ՄԱՉ ՄԸ. — Ֆրանսայի և ամերիկայի մէջ նոր մայ (match) մը սեղի պիտի ունենայ. . . վեց հարուածեանով: մէն մի կողմանէ տասը ատրճանաձիգներ պիտի լինին. հեռաւորութիւնը պիտի լինի 30 մեզր կամ աւելի ճիշդ 50 եւրս:

Օրը դեռ յայտնի չէ, բայց յունիսի 7էն 20ին մէջ օր մը պիտի լինի:

Այս մային տարօրինակութիւնը այն է որ ֆրանսացուց փորձը Բարիզի մէջ պիտի լինի, իսկ ամերիկացուցն Նիւ-Եօրքի մէջ: հետեանքները պիտի քննուին մասնաւոր դատարաններէ և շատ կարեւոր պարգևներ պիտի բաշխուին:

ՈՒՐՈՒԱԿԱՆՆԵՐՈՒ ՊԱՐԱՀԱՆԴԵՍԸ. — Ամերիկացի միլիոնատէրները ամեն բանի մէջ տարօրինակ լինիլ կը սիրեն: Ինչու որ միս մը որ յայտնի է իւր հարստութեամբ և տարօրինակութեամբ, Միս Գօնսթապլ, Միջինքի օրը Նիւ-Եօրքի ակումբներէն միոյն մէջ «Ուրուականներու պարահանդէս մը» (Bal des fantomes) տուեր է: Բոլոր հրաւիրեալները ծպտուած են եղեր ոգիներու և ուրուականներու յատուկ արդուզարդերով, նուագաժութիւնն ալ յուզարկաւորութեան եղանակներ . . . :

Սրահին մէջտեղը կը փայլի եղեր «Ոսկիի ոգին» զոր կը ներկայացնէր Միս Ռութ Լավրանս, որը ճերմակ և ոսկի հագած էր գլխէն մինչև ոտքը:

Պարահանդէսը վերջացեր է «Վհուկներու պար»ով մը: Սարդանաբաղեան կերակուր մը ապացուցեր է թէ ստամբսի տեսակէտով այդ «Շուքերը» իրական «Ոգիներ» կամ «Ուրուականներ» չէին:

A. S. ԵՒ Մ. Ս. ԴԱԻԹ ԲԷԿ

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ 8 ԱՊՐԻԼ 1900

Table with 6 columns of numbers: 1722 1433 2130 483 6284 363, 776 823 1384 1942 1954 1720, 2789 3657 4273 4803 5339 5764, 5374 5324 5842 6354 6026 7642, 7724 8894 8515

Ա. Պ Ա Ր Տ Ա Ք

ԳԱՀԻՐԷԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

ՀԱՄՊՈՒՐԿԻ, ՊՐՈՆՍՎԻԿԻ ԵՒ ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԵԱՆՑ

Պատիւ ունի ծանուցանել թէ՛ կրկար տարիներ վերոյիշեալ վիճակահանութեանց տոմսերու առեւտուրը քաղաքիս մէջ յաջողութեամբ շարունակելէ եւ կատարեալ փորձառութիւն ստանալէ վերջ, այս անգամ վերոյիշեալ տոմսերէն մեծ քանակութեամբ ապագրանք տուած է եւ յետ այսու մինչև ցարդ ծախուածներէն աւելի զեղջեալ գներով պիտի վաճառէ:

Իրեն զիմող գնորդները կատարելապէս գոհացնելու եւ մինչև ցարդ այս առեւտուրին շուրջ տեղի ունեցած դժգոհութիւնները բաժնաւոր համար մեծ հոգածութիւն պիտի ունենայ: Եւ անոնք որ Ա. Գլասի տոմսերը ունին իրենց քով, մինչև վերջին Գլասը լիքերովը հանդերձ իրենց պիտի լրկուի, պատշաճ ժամանակին:

Իր կեդրոնատեղին է Մուսքի մէջ Պ. ԳՕՆՕ-ՄՕՅԻ Պանքան:

Սոյն տոմսերէն պիտի ծախուին նաեւ ի Մուսքի, Տիար Գ. Պալլոգեանի խանութի:

Իւրաքանչիւր վիճակահանութեանց տոմսերու գները:

Համպուրկի 7 Գլաս. իւրաքանչիւրը 13 1)2էն. — ամբողջ 94 1)2:

Պրոնսվիկի 6 Գլաս. իւրաքանչիւրը 16 զրուչէն. — ամբողջ 96:

Հունգարական 6 Գլաս. իւրաքանչիւրը 17 զրուչէն. — ամբողջ 102:

ՄԱՆՕԹ. — Հունգարական տոմսերու Ա. Գլասի թիւերը արդէն հասած են եւ հրապարակ ելած:

4-8

ՆՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Մինչև ցարդ սովորութիւն չէ եղած կամ քիչ պատահած է, որ հայ թերթերու վարչութիւններն մտածած ըլլան հաւաքածոյներու վրայ:

Սոնտ կը պատահի որ այս ինչ կամ այն ինչ թիւը կուզուի բաժանորդի մը կամ հաւաքածոյ մը ունենալ ցանկացողին կողմէ եւ գրեթէ գտնել անկարելի կըլլայ:

Մենք «Արշալոյս»ի հրատարակման առաջին օրէն մեր սպառուովն քանակը ի նկատի ունենալով, քանի մը թիւեր մասնաւորապէս հաւաքածոյի համար աւելի տպագրել տուած եւ առաջին վեցամսեայն կազմել տուած ենք:

Ուստի, ամեն անոնք որ կը փափաքին «Արշալոյս»ի առաջին վեցամսեայն կազմուած ունենալ, կրնան զիմել թերթին ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ:

Լաթակազմին համար 10 ֆրանքի գումար մը զրկելով մեզ:

Գարձեալ արտասահմանի ո՛ր եւ է թերթի բաժանորդ գրուիլ փափաքողներէն անոնք որ զիւրութիւնը չունին անոնց խմբագրութեանց հետ յարաբերութեան մտնելու, կրնան մեզի զիմել:

ՏՕՐԹՈՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

Ամերիկեան Ասամբլայ

Ապսին Շարք Քուպրի Թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ ակումներ:

Կը դադրեցնէ վայրկենապէս ակուայի ցաւերը, ամերիկեան նորագոյն մեթօտով իւր պատրաստած դեղերովն:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակումներուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ:

Վկայեալ աղքատներու ճրի դարմանում, ամէն օր կէսօրէ ետք ժամը 3-5:

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՓՈՒՈ

ԵԿԱՒՕՑ ԵՒ ԸՆԿ

Ուոզթի Պաֆ վաճառատան մօտերը, Կամե-էլ-Պէնարի ցիւս դիմացը

ԵԿԱՒՕՑ ԵՒ ԸՆԿ. բազմաթիւ նորանոր յաճախորդներէ գտած ընդունելութիւններէն քաջալերուած, պատիւ ունին յայտարարելու թէ՛ իրենց փուռին մէջ պատրաստուած ընտիր հացերը զուտ և անխարդախ ալիւրէ պիտի ըլլան միշտ:

ԵԿԱՒՕՑ ԵՒ ԸՆԿ. թեան փուռին մէջ գաղղիական, անգղիական, գերմանական և յունական հացեր պիտի պատրաստուին, իրենց տեսակին մէջ անմիջեղ ըլլալու պայմանաւ:

ԵԿԱՒՕՑ ԵՒ ԸՆԿ. ամենամեծ խնամքով պիտի պատրաստեն սուրճի, թէյի և կաթի պարսիմաթներ և այլն:

ԵԿԱՒՕՑ ԵՒ ԸՆԿ. թեան եղած յանձնարարութիւնը ամենայն ճշդութեամբ և փութով կը կատարուին: 43-50

ԿՈՊԷՌ ՊԵՆԼԵԱՆ

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՁԱՏՈՒՆ ԵՒ ՆԿԱՐՁԱՏՈՒՆ

Տասներկու տարին շարունակ կարեւոր լուսանկարչատուններու մէջ աշխատելով, արհեստին ամեն ճիւղերը լաւ մշակած եւ փորձառութիւն ստացած է:

Պոլսոյ մէջ Ապտուլլահ եղբայր տան, ինչպէս եւ ուրիշ մի քանի ծանօթ տուններու, քաղաքիս մէջ վերջին անգամ Լէքէճեան գործատան մէջ ամենակարեւոր պաշտօնը վարած, այժմ առանձին գործատեղի՝ Իր կը հիմնէ Էգպէիյէ Շարիա Գամեկ Օթիլ ՇէֆէրՏՍԻ ճիշդ զիմաց թիւ 3 արթթմանին երրորդ յարկը, ուր կը պատրաստէ լուսանկարներ, ինչպէս եւ գուրդը կողմին ի հարկին:

Ակրաճիսիւման բնական մեծութեամբ:

Կենդանազիւններ ամերիկեան մեքենայով, որոնք երբէք չեն աւրուիր:

Գունաւոր լուսանկարներ ամեն մեծութեամբ բնական գոյներով միմեքսիւր:

Իւզաներկ եւ ջրաներկ պատկերներ, եւլն:

Լուսանկարի եւ պատկերահանութեան վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ընդունի ուրբու, օկվիթթիւման եւլն:

Իրեն զիմող յաճախորդներն հանել տուած լուսանկարներուն հետ միեւնոյնէն գունաւոր մը նուէր պիտի ստանան, որ նորութիւն մ'է:

Գիմեցէ՛ք եւ կատարելապէս գոհ պիտի մնաք:

ԳԻՐԻՔ ՈՒՉՈՂՆԵՐՈՒՆ

Գահիրէի և չըջակայից գրասէր Հայ հասարակութեան դիւրութիւն մը տալու մտք՝ կը ծանուցուի թէ Հայերէն ամեն դիւր, (Դասական, Դպրոցական, Գիտական, Գրական, Արուեստական, Բանասիրական, Վիրայական եւլն) որ հրատարակուած են և կը հրատարակուին Պոլիս, Իզմիր, Երուսաղէմ, Թիֆլիզ, Վենետիկ ու Վիէննա, կարելի է զիւրամտալի պայմաններով ձեռք բերել՝ զիմելով Տիար Կ. Նաւասարդեանի, Գալտեան վարժարան հայոց ի Գահիրէ: